

## Արմեն Միքայելյան

Պատմալեզուաբան (Ֆրանսա)

### «Է» ՆՇԱՆԱԳՐԻ ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆ ՀՆՉՈՂՈՒԹԵԱՆ ՄԻ ՆՈՐ ՎԱՐԿԱԾ

Հայերեն այբուբենի Է նշանագրի (տառի) սկզբնական (հինգերորդ-դարեան) հնչողութեանը հայագետ լեզուաբանները վաղուց են անդրադարձել եւ զանազան կարծիքներ արտայայտել: Առանց դրանց մանրամասների մէջ մտնելու, ասենք որ գոյութիւն ունեցող վարկածներէն (օրինակ՝ երկար/կրկնակ «ե», փակ «ե», «եյ», ինչ-որ երկբարբառ...) վաղուց արդէն գերիշխողը Է-ի «եյ»<sup>1</sup> արտասանութիւնն է:

Անուանի եւ տարազգի լեզուաբաններ ապացուցել են որ Է-ն ստուգաբանօրէն ԵՅ-էն առաջացած պէտք է լինի:<sup>2</sup> Սակայն միեւնոյն ժամանակ կարծիքներ են արտայայտուել, ըստ որոնց «եյ» արտասանութիւնը գրերի գիտի պահին անտրամաբանական է, քանզի այդ դէպքում այն կարելի կը լինէր պարզապէս գրանցել ԵՅ երկնիշ տեսքով, ինչպէս եւ ունինք զուգահեռ ԱՅ եւ ՈՅ երկբարբառները: Հետեւաբար՝ Է-ի հինգերորդդարեան հնչողութեան այս բացատրութիւնը անվիճելի չէ:

Է-ի սկզբնական հնչողութեան վերաբերեալ՝ այստեղ կը ցանկանանք մի այլ վարկած առաջարկել: Միտքս յղացել է աստիճանաբար՝ հին հայերէնի եւ զանազան այլ լեզուների հետ կատարած համեմատութիւնների արդիւնքում:

Այբուբենի մէջ իրենց ունեցած դիրքով, ինչպէս նաեւ օտար փոխառութիւնների մէջ, Ե-ը կը համապատասխանէ յունարէն եփսիլոնին (Εε), իսկ Է-ն էտային (Ηη): Ինչպէս յայտնի է յունագիտութեան մէջ, յունարէն եփսիլոնը եւ՝ հին դարերում եւ մինչեւ այժմ ունի «ե» հնչողութիւն: Ինչ կը վերաբերի յունարէն էտային, ապա այն հնում կը հնչէր երկար «ե» («եե»), սակայն աւելի ուշ շրջանում, յամենայն դէպս մ.թ. Ե. դարէն յետոյ (երբ ստեղծուեցաւ հայ այբուբենը), սկսաւ հնչել «ի»: Այսպէս՝ յունարէն եփսիլոնի դիմաց ունինք եպիսկոպոս, դելփին, եպարքոս, իսկ էտայի դիմաց՝ կիրակէ, հիւղէ, Հերակլէս...

<sup>1</sup> Սոյն յօդուածում ամենուրեք, ուր խօսք է գնալու հնչողութեան մասին, «ե» նշանագրով դնելու ենք լատիներէն [e] հնչոյթի համարժէքը, եւ ոչ թէ [je]-ի: Այսինքն՝ «ե»-ով արտայայտելու ենք Ե. դարի հայերէն Ե ձայնաւոր տառի արտասանութիւնը: Այնուհետեւ՝ նշանագիր / տառ (եւ ոչ թէ հնչում) իմաստով, ամենուրեք դնելու ենք դրանց մեծատառ ձեւերը (քանզի Ե. դարում փոքրատառ հասկացութիւն դեռեւս չկար):

<sup>2</sup> Հետաքրքրվողներին կը յղենք հետեւեալ աշխատութեանը եւ հեղինակի բերած ծաւալուն մատենագրութեանը. **Միքայել Միքայելյան, Հայերէնի ուղղագրութեան պատմութիւն**, Երեւանի համալսարանի հրատարակչութիւն, Երեւան 1973, էջ 35-45, մատենագրութիւն՝ էջ 422-430:

Սակայն սա միայն առերես է: Շատ բառերի մեջ ունինք՝ էտայի դիմաց Ե (հռետոր, բեւ, կղեր, Հումերոս), իսկ եփսիլոնի դիմաց Է (լեզեոն): Գիւլբուդադեանի վկայութեամբ՝ Կ. Բրոկելմանի յիշատակած օրինակներում՝ 74 բառէն 44-ի մէջ յունարէն E-ին կը համապատասխանէ հայերէն Ե-ը, H-ին՝ Է-ն, սակայն մնացեալ երեսուն բառերի մէջ այդ կարգը խախտուած է, ըստ որում յունարէն E-ը եւ H-ն հայերէնում բառամիջին կը դառնան գերազանցապէս Ե:

Հետաքրքրական է նաեւ Նեդոս (Νεῖδος) գետի անուան տառադարձումը: Նրա հին յունարէն արտասանութիւնը [նե՛ իլոս / նե՛ ըլոս] միայն հայերէնում է վերածուել Ե-ի, օտար այլ լեզուներում սովորաբար հանդէս գալով յունարէն «ει» երկբարբառի աւելի ուշ արտասանութեամբ՝ «ի»:

Այս ամենը կը վկայէ, որ հայերէնը օտար բառերը տառադարձելիս կառչած չի մնացել օտար արտասանութեանը, այլ Ե/Է-ի հնչողութիւնը յարմարեցուցել է իր սեփական հնչիւնական կանոններին (որ ստորեւ պիտի տեսնենք), այն է՝ Ե բառակերպին, բառամիջին կամ բառի վերջին վանկում, Է՝ միմիայն բառի վերջին վանկում կամ ձայնաւորէն առաջ:

Մեր առաջարկած տարբերակով՝ Է տառը Ե. դարում պէտք է որ «ե՛ ը» հնչողութիւնն ունենար (ստորեւ պիտի խօսինք դրա հիմնաւորման մասին): Այս երկբարբառը արտասանելու համար ճշդենք երեք հանգամանք: Նախ՝ ինչպէս ասացինք, «ե» հնչիւնը հարկաւոր է արտասանել հինգերորդդարեան հնչումով, այսինքն այսօրուան մաքուր «ե» հնչումով, լատիներէն [e]: Այնու հետեւ՝ յաջորդող «ը»-ն հարկաւոր է հնչեցնել թեթեւ, հազիւ ընկալելի: Եւ վերջին՝ ամենակարեւոր կէտը, երկբարբառի մէջ շեշտը դնել «ե» հնչիւնի վրայ (եւ ոչ՝ «ը»-ի):

Առաջարկուող արտասանութիւնը շատ մօտ է հնչելու միջազգային հնչիւնական այբուբենով արտայայտելի [eə] (փակ «ե»-ով) կամ [eʰ] (բաց «ե»-ով) համակցութեանը, իսկ աւելի ճշգրիտ [eː], այսինքն՝ «ը» հնչիւնի թոյլ արտասանութեամբ: Նման հնչում կը գտնենք, օրինակ՝ անգլերէն *here, where, there* բառերի մէջ (արտասանել մաքուր բրիտանական գրական հնչողութեամբ, այսինքն՝ առանց վերջում «ր» հնչիւն յաւելելու):

Ինչո՞ւ ենք մենք այս կարծիքին:

Ե. դարի իրողութեամբ՝ բառի մէջ Է նշանագրի հնարաւոր դիրքերը հետեւեալ երեք դէպքերն են միայն:

Առաջին՝ բառի վերջին բաց վանկի մէջ, այսինքն բառի բացարձակ վերջին տառը. *ասէ, սիրէ, ի ձայնէ, մարգարէ, Վաչէ, սերովբէ...*

Երկրորդ՝ Է-ն կը հանդիպի բառարմատի վերջին փակ վանկի մէջ, միայն մեկ բաղաձայնէ առաջ. *սէր, ծէս, մէջ, պարտէզ, անէծ(ք), հանդէս,*

նուէր... Այս Է-երը օրինական Է/Ի հնչինափոխութիւնն ունին: Այստեղ պէտք է աւելացնենք բառեր – աղուէս, աղէտ, պատճէն, պարէն, նաեւ օտար անուններ՝ Մովսէս, Իսրայէլ, Գաբրիէլ – որոնք ունին Է/Ե հնչինափոխութիւն: Ամենայն հաւանականութեամբ՝ Ե. դարէն առաջ նոյնիսկ դադարել էր Է/Ի հնչինափոխութեան ուժը, եւ նոր բառերը, մասնաւորապէս օտար փոխառութիւնները, այլեւս այդ օրէնքին չէին ենթարկուեր:

Երրորդ՝ բառամիջում Է-ն կը յայտնուի միայն մի այլ ձայնաւորէ առաջ. քրիստոնէի, պաշտաւնէի, Հրէից, Էանց, Էառ, Էարկ (ի տարբերութիւն՝ եբեր, ետես, եգիտ ձեւերի): Բառամիջում կը հանդիպի նաեւ երբեմն ԵԱՅ-էն հնչինափոխ, յօդակապի դեր կատարող Է. ալէկաւծ, ոսկէգաւծ:<sup>3</sup>

Բառասկզբին Է տառը կը հանդիպի միմիայն միավանկ բառերի մէջ, այսինքն երբ Է-ն բառի միակ ձայնաւորն է, հետեւաբար՝ միաժամանակ նաեւ բառի վերջին վանկի ձայնաւորը: Այստեղ կը գործէ ոչ թէ բառասկզբի՛ն, այլ բառավերջի՛ն լինելու հանգամանքը: Այդպիսի միավանկ բառերն են. Էական բայի սահմանական ներկայի երկու ձեւ (է, էք) եւ նրանէն կազմուած բարդութիւնները (Էակ, Էական...), ինչպէս եւ՝ էգ, էջ, էշ, էմ(ք), է՛ր, եւ եբրայեցերէն էլի (Աստուած իմ) ձեւը (ուղիղ ձեւն է՝ էլ):

Բառամիջին՝ այլ դիրքերում, եւ բառավերջին՝ երկու բաղաձայնէն առաջ Է չի գրուիր: Բացառութիւն են. մէնջ, ձէնջ, եղէգն: Բառին յոգնականակերտ «ք»-ի յաւելումը ուղղագրութեան տրամաբանութիւնը չի փոխեր նմանապէս:

Երէ / երէ բառը երկու ձեւով է վկայուած: Կը կարծենք, որ այն երկու արտասանութիւն կարող էր ունենալ. «երէ՛» կամ «երէ՛»:

Ինչպէս կը տեսնենք, Է-ն, բառի վերջին վանկի ձայնաւորը լինելով, ամենուրեք շեշտակիր է: Բացառութեամբ, երբ բառամիջում Է-ն կը նախորդէ մի ձայնաւորի, որտեղ յօրանջը կանխելու համար «ը»-ի արտասանութիւն է հարկաւոր: Հին հայերէնում, ընդհանրապէս, յօրանջը կը կանխէին «յ» կամ «ւ» կիսաձայնների կամ «հ» բաղաձայնի միջոցաւ. Միքայէլ, փարաւոն, գեհէն...

Է-ի «է՛ր» հնչողութեան հիմնաւորումները կը բաժանենք երեք խմբի:

Նախ՝ հնչինական բացատրութիւն: Նկատեցինք, որ Է-ի «էյ» հնչումը Ե. դարի համար անտրամաբանական է. Մեսրոպ Մաշթօցն ինքը պիտի չյօրինէր այդպիսի մի աւելորդ նշանագիր, եթէ այն պարզապէս կարող էր գրել «ԵՅ»: Եւ իհարկէ՝ Մաշթօցի ժամանակակից առաջին իսկ աշակերտներն ու թարգմանիչները պիտի նկատէին դրա անյարիր լինելը: Մեր պատմագրութիւնը կենթադրէ որ Մեսրոպ Մաշթօցը Վաղարշապատ վերադառնալիս իր հետ բերել է բոլոր երեսուն եւ վեց նշանագրերը, եւ որ դրանք այլեւս որեւէ

<sup>3</sup> Գիլբրտադէան, անդ, էջ 39:

փոփոխութեան չեն ենթարկուել: Սակայն ոչինչ կը հակադրուի պատկերացնելու, որ նախնական նշանագրերը Հայաստան հասնելէն յետոյ մասնակի փոփոխութիւններ կամ լրացումներ կրած լինէին: Անհաւանական չէ նաեւ, որ Սահակ Պարթեւը կամ թէ աշակերտներն ու թարգմանիչները զանազան կարծիքներ արտայայտած լինէին եւ առաջին իսկ մի քանի ամիսների կամ տարիների ընթացքում ուղղագրութիւնը ճշդուած լինէր: Ա՛յլ բան է նշանագրեր ստեղծելը, ա՛յլ բան՝ ուղղագրութիւնը կարգի բերելը: Սակայն այստեղ դրա մասին չենք խօսելու:

Ե. դարի հայերէնի ուղղագրութիւնը սկզբէն իսկ հրաժարեցաւ «ը» հնչիւնը հետեւողականօրէն գրի առնելէն: Պատճառների մասին կարելի է ենթադրութիւններ անել (մասնաւորապէս հայերէն գրերը համեմատելով ժամանակի այլ այբուբենների մէջ «Ը» տառի բացակայութեան հետ<sup>4</sup>), սակայն փաստը փաստ է, որ «ը» հնչիւնը համարեայ երբեք գրի չի առնուած, բացառութեամբ մի քանի եզակի բառերի (ԸՆԴ, ԸՍՏ, եւ հիմնականում այս նախդիրներով կազմած բաղադրեալ բառերէն ոմանց մէջ՝ ըմբոնեմ, ընդարձակ, ընկալում, ընտանի, ընկեր, հնչիւնափոխ դիրքերում՝ ըղձամ, ըմպեմ, ընչագուրկ):<sup>5</sup> Սակայն միշտ՝ բառարմատի սկզբին, եւ երբեք՝ միջին կամ վերջին: Հետեւաբար՝ տրամաբանութիւնը կը յուշէ, որ Է-ի մէջ չգրուող բայց արտասանուող «ը» հնչում կարելի է փնտրել: «Ը» հնչիւնը, ի դէպ, միակն է, որ այսպիսի բախտի է արժանացել. հայերէնի մնացած բոլոր հնչիւններն իրենց տառային տեսքն ունին:

Մաշթոցը բնականաբար պետք է զանազանէր մաքուր «ե»-ն երկբարբառային «եր» հնչումէն: Իսկ քանի որ հայերէնում «ը» հնչիւնը «որոշուեցաւ» չգրել, ապա «եր» արտայայտելու միակ միջոցը յաւելեալ նշանագիր օգտագործելու մէջ էր:

Գծագրական հիմնաւորում: Ուշադրութիւն դարձնելով Ե եւ Է տառերի գծագրութեան վրայ, կը նկատենք որ Է տառը Ե-էն կը տարբերի միայն իր վերջին ստորին կոր վերջաւորութեամբ: Ե-ի ստորին, վեր բարձրացող գիծը Է-ի մէջ թեքած է դէպի վայր եւ ստացել է Ը-ի վերջաւորութեան ձեւը: Կարծես թէ Մաշթոցը իրար է միաձուլել Ե եւ Ը տառերը: Առաջին հայեացքէն սա կարող է զուտ պատահական նմանութիւն թուիլ, սակայն պատկերային նմանութիւնը երկու տառերի (Ե եւ Ը) միջեւ ակնյայտ է: Հայագետ բոլոր

<sup>4</sup> Հայերի շրջապատում Ե. դարում ոչ մի ժողովուրդ չունէր «ը» հնչիւնն արտայայտող նշանագիր (յունարէն, ասորերէն, պարսկերէն, լատիներէն, եբրայեցերէն...): Եբրայեցերէն գրութեան մէջ «ը» հնչիւնի առկայութիւնը կը յիշատակուէր որպէս «շուա» (շվա), այսինքն՝ ոչինչ, դատարկութիւն:

<sup>5</sup> Հնդկերէն զանազան գրութիւնները նոյնպէս որդեգրել են հայերէնին շատ մօտ տրամաբանութիւն. բառամիջում գաղտնավանկ «ը» հնչիւնը գրեթէ երբեք չի արտայայտուիր:

լեզուաբանները միակարծիք են, որ ե՛ւ Ե-ի, ե՛ւ Է-ի մէջ «ե» հնչիւն կայ: Հետեւաբար նրանց գծային (պատկերային) նմանութիւնը պատահականութիւն չէ: Եթէ պատահական չէ Ե-ի եւ Է-ի նմանութիւնը, շատ հաւանական է, որ պատահական չէ նաեւ Է-ի եւ Ը-ի վերջին կորագծի նմանութիւնը:<sup>6</sup>

Այնու ամենայնիւ, մենք կը համարենք որ ամենակարեւոր հիմնաւորումը պէտք է ստուգաբանական բացատրութեան մէջ փնտրել:

Ինչ իսոյք՝ Է-ի «ԵՅ» երկբարբառէն ծագած լինելու ստուգաբանութիւնը գիտականօրէն ապացուցուած է. շատ դէպքերում «ԵՅ»-ը համապատասխան է «ԱՅ» երկբարբառին. սիրէ / աղայ, սիրէք / աղայք... սիրէի, սիրէիր, սիրէր, սիրէաք, սիրէիք, սիրէին... աղայի, աղայիր, աղայր, աղայաք, աղայիք, աղային... Սակայն սա միակ բացատրութիւնը չենք կարող համարել:

Վերոյիշեալ բացատրութիւնը անզօր է օտար, մասնաւորապէս յունարէնէն փոխառեալ բառերի բացատրութեան համար: Յունարէն փոխատու որեւէ բառ չի պարունակեր «եյ» հնչում այնտեղ, ուր հայերէն գրած ունինք Է տառը: Նոյն ստուգաբանութիւնը թերի է նաեւ բազմաթիւ գոյական անունների բացատրութեան համար, որտեղ ունինք Է/Ի կամ Է/Ե հնչիւնափոխութիւնը. ընդ որում՝ «եյ»/«ի» ձայնային հնչիւնափոխութիւնը թէև յաճախական, բայց բոլորովին բացարձակ երեւոյթ չէ:

Միւս կողմէն՝ փոխառեալ օտար անունների մէջ Է/Ե հնչիւնափոխութիւնը («ե՛ր»/«ե» ձայնային հնչիւնափոխութիւնը) լիովին հաւանական է, եթէ նկատի առնենք «ե»-ի շեշտակորոյս լինելու փաստը: Այսպէս, ուղղական՝ Մովսէս (հնչումը՝ «մովսէ՛ս»), սեռական՝ Մովսեսի (հնչումը՝ «մովսեսի՛»):

Հնարաւոր է առաջարկել նաեւ այլ ստուգաբանութիւններ: Օրինակ. Էական բայի ներկայ ժամանակի խոնարհումն է. ԵՄ, ԵՍ, Է, ԵՄՔ, ԷՔ, ԵՆ: Յոգնակի առաջին դէմքի ԵՄ-Ք ձեւը կը յուշէ որ այն կազմուած է եզակի առաջին դէմքի վրայ յոգնականակերտ «Ք» յաւելելով, այսինքն՝ ԵՄՔ բառը ոչ թէ հնդեւրոպական ժառանգութիւն է, այլ ԵՄ-ի վրայ հայկական կազմութիւն: Նոյնը կարող ենք ասել եւ յոգնակի երկրորդ դէմքի ԷՔ-ի համար<sup>7</sup>: Այն ակնյայտօրէն ԵՄ-Ք-էն է սերած, հետագայ հնչիւնային կրճատումով. \*ե՛սք – \*ե՛հք – \*ե՛րք (գրած՝ ԷՔ), ընդ որում բառի շեշտն իր տեղը պահել է անփոփոխ:

Էական բայի եզակի երրորդ դէմքի «Է» ձեւը անշուշտ հնդեւրոպական ժառանգութիւն է, հնագոյն (նախագրային) «\*եստ» ձեւէն: Այստեղ նոյնպէս

<sup>6</sup> Նոյն տրամաբանութեամբ՝ նմանութիւն կը տեսնենք նաեւ Լ ու Ղ նշանագրերի միջեւ, եւ դա լիովին բացատրելի է, քանզի Ղ-ը թաւ Լ-ի հնչումն ունէր:

<sup>7</sup> Յոգնակի թուի առաջին եւ երկրորդ դէմքերը, իրենց կիրառութեամբ նուազ յաճախականութիւն ունենալով, շատ լեզուներում սովորաբար ասելի ուշ կազմութեան են:

կարելի է տեսնել բառի կրճատումը. \*ե՛ստ – \*ե՛հտ – \*ե՛ըտ – \*ե՛ը (գրած՝ «Է»), «տ»-ի վերջնական անկումով:

Ինչպես կը տեսնենք, նշուած բառերի մէջ բացակայ է «յ» ձայնը:

Եւ ընդհանրապէս, ի՞նչը կը ստիպէ մեզ ընդունել -ԱՅԻ եւ -ԷԻ վերջաւորութիւնների պարտադիր գուգորդութիւնը: Պարտադիր չէ, որ հին հայերէնը յօրանջի վերացմանը երկու դէպքերում էլ նոյն լուծումը տար: Լինովին ընդունելի կարելի է համարել որ «աի» յօրանջը վերացուած է «յ» հնչիւնով, իսկ «եի» յօրանջը՝ թոյլ «ը» հնչիւնով: Դրանց կողքին՝ չորրորդ լծորդութեան «ուի» վերջաւորութիւնը (թողուի, թողուիր...) յօրանջը վերացնելու բնաւ փորձ չի կատարել:

Այսպիսով, Է-ն փաստօրէն կը միանայ վերջընթեր շեշտ ունեցող հայերէն բազմաթիւ բառերին, ինչպէս՝ աստ՛մէն, ձո՛ւկէն, արեգա՛կէն, գա՛ռնէն, խա՛շէն, ո՛սկէր, ա՛ստէղ, դո՛ւստէր, հա՛մէր, փո՛քէր... նմանապէս եւ՝ Արտաշէ՛ս, Արիստակէ՛ս, սե՛ր, Աքիլլէ՛ս, Յովսէ՛փ, եւ այլն:

Ուսումնասիրողներին երբեմն գայթակղել է «ԵԹԷ» շաղկապի (եւ նրա կրճատ «ԹԷ» տարբերակի) հին հայերէնում աւելի յաճախ «Ե» վերջաւորութեամբ գրութիւնը՝ ԵԹԵ / ԹԵ: Սա կարող է բացատրուել նրանով, որ այս շաղկապը սեփական շեշտ չկրող մասնիկ է եւ արտասանութեան մէջ կը յարի իրեն յաջորդող բառին (որ յունարէն եզրաբանութեամբ կը կոչեն *προκλιτική*, բառացի՝ առաջախոնարհ): Ասել է թէ՛ ԵԹԵ բառի վերջին «Ե»-ն բառավերջի դիրք չի զբաղեցներ: Օրինակ. «Այլ եթէ տեսանէ ոք» դարձուածքի հինգերորդարեան կենդանի արտասանութիւնը պիտի լինէր [այլեթէտեսանէ՛ոք]: Այսինքն՝ ողջ դարձուածքի հնչողական միակ շեշտը Է տառի «ե» հնչիւնի վրայ է (ՌՔ-ը եւս գուրկ լինելով սեփական շեշտէն):

Հետագայ դարերում Է-ն կորսնցուց իր «ը» յաւելուածը եւ Է-ի հնչողութիւնը համընկաւ Ե-ին: Գիւլբուղաղեանը կը յիշատակէ ուղղագրութենէն շեղուած Է-ի՝ իրեն հանդիպած բառերի մօտաւոր մի ցուցակ:<sup>8</sup> Յուցակի 94 բառէն (ուր Է-ի փոխարէն Ե է գրուած) միայն 19-ն են ինքնուրոյն բառեր, մնացածները «ԷԻ» համակցութեամբ բայական վերջաւորութիւններ են (-ԷԻ, -ԷԻՐ, -ԷԻՆ...), որոնց մէջ ականջի համար դիրքին էր շփոթել «եի» եւ «եի»՝ գնալով աւելի անյստակ արտասանութիւնները:

Որպէս եզրակացութիւն՝ ասենք, որ մեր բերած ենթադրութիւնը ընդամենը մի նախավարկած կարող է համարուել գոյութիւն ունեցող գիտական վարկածների շարքում: Միայն հետագայ, աւելի խորը ուսումնասիրութիւնները կարող են որոշակի լոյս սփռել սոյն կարծիքի վրայ:

<sup>8</sup> Գիւլբուղաղեան, անդ, էջ 44:

Մենք այն համոզման ենք, որ ամեն մի, քիչ թե շատ գիտական հիմքեր ունեցող կարծիք, գոյութեան իրաւունք, եւ նամանաւանդ՝ արտայայտուելու պարտաւորութիւն ունի: Քանի դեռ կենդանի է կրող անհատը, միտքը հնարաւոր է գրանցել. այնու հետեւ՝ բոլոր մտքերը կորչելու են առյաւէտ:

— x —

Armen Michaelian  
Historian-Linguist (France)

A New Version of the Ancient Pronunciation of the Armenian Letter Է (Ē)

Summary

The article proposes a new version for the original articulation (pronunciation) of the Armenian letter Է (Ē) in the 5<sup>th</sup> century, that is at the moment of the invention of the Armenian alphabet. The proposed version is the pronunciation [’eə], in contrast with the traditionally retained pronunciation which is [ej]. The author provides phonetic, graphic and etymological explanations.

Армен Микаелян  
Историк-лингвист (Франция)

Новая версия древнего произношения армянской буквы Է (Ē)

Резюме

В статье предлагается новая версия для первоначальной артикуляции (произношения) армянской буквы Է (Ē) в V веке, то есть на момент изобретения армянского алфавита. Предложенная версия – произношение [’eə], в отличие от традиционно принятого произношения [ej]. Автор предоставляет фонетические, графические и этимологические объяснения.